

5. ՀՀ 2011Թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ

5.1 ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Մարդահամարի գործընթացները ծրագրելու և աշխատանքները վերահսկելու համար իրականացվեց 48 քաղաքային և 37 խոշոր (5000 և ավելի բնակչությամբ) գյուղական համայնքների, ինչպես նաև Երևան քաղաքի 12 վարչական շրջանների սխեմատիկ հատակագծերի **(6-ական թղթային օրինակ և էլեկտրոնային տարբերակ) պատրաստման** աշխատանքները (ընդամենը 97 միավորի):

Սխեմատիկ հատակագծերի էլեկտրոնային տարբերակներ և թղթային մեկական օրինակներ ուղարկվեցին ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ՝ տեղերում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների հետ համատեղ ստուգման և **մարզպետարանի լիազոր անձի կողմից հաստատման**, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ճշգրտման համար: Սխեմատիկ հատակագծերի վրա կատարված ճշգրտումները փոխանցվեցին նաև մնացած օրինակների վրա: Սխեմատիկ հատակագծերը պատրաստելիս կարևորվում էր մարդահամարի կազմակերպման համար անհրաժեշտ տվյալների առկայությունը:

2011թ. օգոստոսի 15-ի դրությամբ ՀՀ 85 համայնքների և Երևան քաղաքի 12 վարչական շրջանների սխեմատիկ հատակագծերի ընդունումն ավարտված էր:

Այս աշխատանքների արդյունքում ճշգրտվեցին քաղաքների սահմանները, ինչպես նաև հնարավորինս կարգավորվեցին փողոցների անվանումները, թաղամասերի և տների համարակալումը:

Յուրաքանչյուր քաղաքի (խոշոր գյուղի) սխեմատիկ հատակագծի մեկ օրինակի վրա տարածքը սահմանազատվեց ըստ ցուցակագրման տեղամասերի և բաժանվեց ցուցակագրողներին, մյուս օրինակներն էլ համապատասխանաբար բաժանվեցին ըստ հաշվային, հրահանգչական և մարդահամարային տեղամասերի:

